# HSBC

## ՄԵՆՔ ՓՈԽՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ԱՆՈՒՆԸ

## ԵՎ ՈՒՐԻՇ ՈՉԻՆՉ

Աշխարհի տարբեր մասերում մեր գործունեությունը ընդհանրացնելու նպատակով, մենք մեր Միդլենդ Արմենիա Բանկ ՓԲԸ անվանումը, փոխարինում ենք HSBC-ով: Անվանափոխումից բացի, ամեն ինչ մնում է նույնը: Միևնույն բարձրորակ ծառայությունը, միևնույն հարմարավետ տեղանքը, միևնույն պատրաստակամությունը ծառայելու ի նպաստ Հայաստանի: Փաստորեն, Ձեզ, որպես հաճախորդի վրա, որևէ կերպ այս փոփոխությունը չի անդրադառնա: Մենք կմնանք՝ նույն ծանոթ դեմքերը:

HSBC-ն աշխարհի ֆինանսական և բանկային ծառայություններ մատուցող խոշորագույն կազմակերպություններից մեկն է, և ամբողջ աշխարհում հաճախորդներին իր ծառայություններն է առաջարկել շուրջ 130 տարի: Ունենալով ավելի քան 5,000 գրասենյակներ 79 երկրներում և տարածքներում, HSBC-ն իսկապես գլոբալ կազմակերպություն է՝ 483 միլիարդ ԱՄՆ դոլար ընդհանուր ակտիվներով և 41 միլիարդ ԱՄՆ դոլար կապիտալով (1998թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ):

Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ
2 Խորհրդարանի փողոց, Երևան



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հայաստանի ամերիկյան համալսարանը (ՀԱՀ) սկսում է 1999-2000 ուսումնական տարվա ընդունելությունը մագիստրոսի կոչում շնորհող հետեւյալ ծրագրերով.

- ԵՐԿՐԱՇԱՐԺԱԿԱՅՈՒՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
- ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
- ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
- ԳՈՐԾԱՐԱՐ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ
- ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
- ՀԱՆՐԱԿԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ
- ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ

*Բարձրագույն կրթությունը եւ անգլերենի իմացությունը պարտադիր է:*

Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է մայիսի 7-ը, ժ. 15⁰⁰:

Ապրիլի 17-ին, ժ. 11⁰⁰-ին հրավիրում ենք ՀԱՀ-ի մեծ դահլիճ մասնակցելու **բաց դռների օրվան**:

Տեղեկությունների համար դիմել
Մարշալ Բաղրամյան 40,
Ընդունելության գրասենյակ (19)

Հեռ. 27-16-29



SIBLEY International · USAID · AED Academy for Educational Development

## ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը (USAID), Կրթական զարգացման ակադեմիան (AED) եւ Sibley International-ը

*տեղեկացնում են*

տնտեսական թեմաներով գրող լրագրողներին, որ «Անցման շրջանի տնտեսությունների հիմնախնդիրները» զեկուցումների շարքի հերթական հանդիպումը կկայանա **ապրիլի 5-ին, ժամը 11:30-ին** Թեքեյան մշակութային կենտրոնում *(Խանջյան 50)*:

Հանդիպումը կվարի «Գործարարության, տնտեսագիտության, անգլերեն-հայերեն բառարանի» հեղինակ

**Ալեքսանդր Աղաբեկյանը:**

*Թեման* **«Նոր տնտեսական հարաբերությունները եւ նոր լեզուն»:**



ARMENTEL

## ԱՐՄԵՆՏԵԼԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ Է ՀՐԱՎԻՐՈՒՄ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ

**Պահանջվում է.**

հայերեն եւ անգլերեն լեզուների գերազանց իմացություն, տեխնիկական եւ ֆինանսական տերմինների թարգմանության կարողություն, համակարգչով աշխատելու հմտություն:

Ցանկացողները մինչեւ 1999 թ. ապրիլի 12-ը կարող են դիմել Արմենտել գործադիր գլխավոր տնօրենի տեղակալի ընդունարան (Երեւան, Սհարոնյան 2, 6-րդ հարկ, հեռ. 28-92-04, 28-10-52):

Անհրաժեշտ է ներկայացնել ինքնությունը հաստատող եւ կրթության վերաբերյալ փաստաթղթեր, ինչպես նաեւ համառոտ կենսագրական տվյալներ: *ԱՐՄԵՆՏԵԼ ՀՁ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺԻՆ*



ARMENTEL

## ԱՐՄԵՆՏԵԼԸ հայտարարում է մրցույթ

Մրցույթին կարող են մասնակցել այն շինարարական կազմակերպությունները, որոնք հնարավորություն ունեն պատրաստելու Արմենտել ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմաններով 350 հաս հեռախոսափոխիչների բեռնվյա հիմքերը:

Տեխնիկական տվյալները ստանալու համար կարող եք դիմել Սարյան 22, 11-րդ հարկ, սենյակ 1105 հասցեով, ս. թ. ապրիլի 2-6-ը:

Տեղեկատու հեռախոս 53-56-00:

ԱՐՄԵՆՏԵԼ ՀՁ ՓԲԸ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺԻՆ



## Լուծարվում է

«ԳԼՈՍՈՒՍ» ՍՊԸ-ն գրանցված Սպանդարյան տարածքում:
Գրանցման վկայական թիվ 01Ա 031075,
ձեռնարկության կոդը 37237205,
հվհհ-ն 02527909



## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության «Ֆէն գույքի իրացման գործակալություն» ՊՓԲԸ-ն իրականացնում է բռնագրավված, տիրազուրկ, ժառանգության իրավունքով պետությանն անցած գույքի վաճառք: Վաճառքն իրականացվում է ուղղակի պայմանագրով, կոմիսիոն հիմունքներով եւ վաճառքի աճուրդային եղանակով (**դասական եւ հոլանդական**):

Գործակալությունը ձեր ուշադրությանն է ներկայացնում **շուկայական գներից ցածր գներով** ժողովրդական արվեստների լայն ընտրանի, այդ թվում թանկարժեք մետաղներից եւ քարերից պատրաստված իրեր, «Օֆսեթ» թուղթ, սպիրտ, ոգելից խմիչքներ, ծխախոտ, սննդամթերք, բնական կաշվե հագուստ, բնական մորթուց մուշտակներ, ինչպես նաեւ ավտոպահեստամասեր, դեղորայք, գորգեր, կարպետներ եւ այլն:

Աճուրդներն անցկացվում են շաբաթը 2 անգամ, ժամը 11-ին:
Անհրաժեշտ տեղեկությունների համար զանգահարել
**34-31-69, 35-28-06, 35-05-74** հեռախոսահամարներով:

*Հասցեն՝ ք. Երեւան, Մազմանյան 5:*



## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## «Զվարթնոց» օդանավակայանի բեռնային համալիրի շահագործման մրցույթի վերաբերյալ

Զարգացման եւ վերակառուցման եվրոպական բանկի կողմից «Զվարթնոց» միջազգային օդանավակայանին բեռնային համալիրի կառուցման համար տրամադրված վարկային ծրագրի շրջանակներում անցկացվել է «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի բեռնային համալիրը վարձակալության տալու նպատակով բաց մրցույթ:

Հաշվի առնելով առաջարկությունները ու փաստաթղթերը, որոնք ներկայացվել են բաց մրցույթի մասնակիցների կողմից, կառավարության Մրցութային հանձնաժողովը որոշում է կայացրել, որ մրցույթի մասնակիցներից ոչ մեկը չի բավարարել մրցութային փաստաթղթերով սահմանված պահանջները: Այդ պատճառով բաց մրցույթը չեղյալ համարվեց 1999 թ. մարտի 26-ին՝ առանց կոնցեսիոն համաձայնագրի շնորհման:

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ


«ՍՓՅՈՒՌ». ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ: Հեռախոսներ 569393, 581351

«Ազգ» հրատարակչութեան տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2. Գրանցման թիւ 65. Պատվեր 69149. Պատուէր 1026. Տպաքանակը 4000. Ստորագրուած է տպագրութեան 2. 04. 1999. Գինը 100 դրամ

digitised by A.R.A.R.@